ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ավտոմեքենայի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 29.03.2019 ժամը 10.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Հ. Սարոյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը
Ա. Գաբրիելյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Հ. Հակոբովը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. **Ընդունել ի գիտություն.**

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել է հարցում՝ Վեկար ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

1.2 Գնահատող հանձնաժողովի 25.03.2019 թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 28.03.2019 ներկայացնել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիրը/:

2. **Հանձնաժողովն արձանագրեց.**

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից 28 .03.2019 առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ Վեկար ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ տեղեկատվություն չի ստացվել:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով նշված Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող փաստաթղթերը www.armeps.am համակարգով սահմանված ժամկետում ներկայացվել են Վեկար ՍՊԸ-ի կողմից և գնահատվել բավարար /կցվում են/:

3. <u>Հանձնաժողովը որոշեց.</u>

3.1 Համաձայն Կարգի 44-րդ կետի՝ սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Հիմք ընդունելով վերոգրյալը ընտրված մասնակից ճանաչել 1 չափաբաժնով՝ Վեկար ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Ա. Ավետիսյան

_____ Ա. Գաբրիելյան

_____ Հ. Հակոբով

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան